

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Փոխվարչապետի 2021 թվականի նոյեմբերի 4-ի 894-Ա որոշմամբ ստեղծված «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդին կից՝ Կոնվենցիայի ներքո երկրի հաշվետվայնության հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստ

ք.Երևան
02.12.2021թ.

Ժամը՝ 14:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- | | |
|-----------------------------|--|
| Ն. Բուդոյան | շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ, |
| Ա. Պապոյան | ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սիյուռքի վարչության պետ, |
| Ն. Մարգարյան | տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի ավագ մասնագետ, |
| Ք՝ Հովհաննիսյան | աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետ |
| Ա. Ռշտունի | արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժնի գլխավոր իրավաբան, |
| Ա՝ Ավետիսյան | վիճակագրական կոմիտեի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ, |
| Ն. Մանդալյան | վիճակագրական կոմիտեի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ, |
| Տ. Ասրյան | կադաստրի կոմիտեի իրավաբանական վարչության օրենսդրության մշակման և որակավորման բաժնի գլխավոր իրավաբան, |
| Ն. Պետրոսյան
Ա. Ասլանյան | քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ,
արտակարգ իրավիճակների նախարարության աղետների ռիսկի կառավարման քաղաքականության մշակման վարչության քաղաքականության մշակման բաժնի պետ, |
| Ն. Զաստուխովա | արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության խորհրդական: |

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդին կից՝ Կոնվենցիայի ներքո երկրի

հաշվետվայնության հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստի քննարկում և աշխատանքային խմբի ղեկավարի ընտրություն:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ՝

Նիստը վարում էր կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը, ով ներկայացրեց կլիմայական քաղաքականության ոլորտում իրականացված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների՝ ՀՀ ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և Փարիզյան համաձայնագրի 13-րդ հոդվածի ներքո, համաձայն ինչի Հայաստանը, որպես Կողմ երկիր, պարտավորվում է պարբերաբար տեղեկատվություն տրամադրել իր Ազգային մակարդակով սահմանված գործողությունների / NDC իրագործման առաջընթացի, ինչպես նաև՝ կլիմայի հարմարվողականությանն ուղղված գործողությունների և ստացած միջազգային աջակցության վերաբերյալ: Այս համատեքստում նա ներկայացրել է շրջակա միջավայրի նախարարությամբ համակարգվող «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցումը» GEF/UNDP ծրագիրը, ինչը միտված է կլիմայական գործողությունների թափանցիկության արդյունավետ շրջանակի կառուցմանը: Ծրագիրը ներառում է երեք բաղադրիչ.

- ✓ ազգային ինստիտուցիոնալ կարգավորումների ստեղծում՝ թափանցիկության ընդլայնված շրջանակի համար,
- ✓ թափանցիկության ընդլայնված շրջանակին աջակցող Չափումների, հաշվետվողականության և հավաստագրման /ՉՀՀ համակարգի ներդրում,
- ✓ կարողությունների հզորացում՝ ապագայում թափանցիկությանն առնչվող գործողություններին օժանդակելու համար:

Քննարկվել են կլիմայական ծրագրերի և նախագծերի հետ կապված պորտալի ստեղծման հարցերը: Տկն. Չաստուխովան կարևորեց տեղեկատվության ներբեռնման դեպքում վերահսկողության մեխանիզմի անհրաժեշտությունը, տկն. Հովհաննիսյանը առաջարկեց, որ պորտալները հարմարեցվեն նաև խոցելի խավերին, տկն. Ավետիսյանը առաջարկեց այս խմբում ներգրավվել նաև Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից ներկայացուցչի, որովհետև տվյալների համադրելիության հետ կապված խնդիրներ կան: Պրն.Պապոյանը կարևորեց աշխատանքային խմբի կատարողականի գնահատման ձևանմուշի մշակումը խմբի կողմից, որպեսզի հնարավոր լինի կատարված աշխատանքը դարձնել չափելի: Քննարկվել են նաև աշխատակարգի հետ կապված հարցեր և նախանշվել խմբի գործունեության հետ կապված հետագա քայլերը: Մասնակիցների ձայների մեծամասնությամբ Նոնա Բուդոյանն ընտրվեց որպես աշխատանքային խմբի ղեկավար:

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ն.ԲՈՒԴՈՅԱՆ